



USAID
FROM THE AMERICAN PEOPLE



ASU THE MELIKIAN CENTER:
Russian, Eurasian & East European Studies
ARIZONA STATE UNIVERSITY



Հայաստանում գյուղական կանանց աշխատանքային զբաղվածության վրա ազդող գործոնների վերլուծություն

Ռաֆաել Բախտավորյան և Արամայիս Դալլաքյան

- ☎ *Aramayis Dallakyan*
- ☎ *Rafael Bakhtavoryan*
- ☎ *Center for Gender and Leadership Studies*

Մույն հրատարակությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Այստեղ արտահայտված տեսակետները /կամ նյութի բովանդակությունը/ միմիայն հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

Աբստրակտ

Սույն հետազոտությունում տարբեր սոցիալ-տնտեսական բնութագրիչների ազդեցությունը Հայաստանում գյուղական կանանց աշխատանքային զբաղվածության վրա ուսումնասիրվել է լոգիստիկ ռեգրեսիոն մոդելի միջոցով՝ օգտագործելով Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների հայաստանյան գրասենյակի կողմից 2012 թվականին հարցման միջոցով հավաքագրված տվյալները: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ այնպիսի բնութագրիչներ ինչպիսիք են տարիքը, անգլերեն լեզվի իմացությունը, կրթության աստիճանը և ամուսնական կարգավիճակը, վիճակագրորեն նշանակալի ազդեցություն ունեն գյուղական բնակավայրերում կանանց աշխատանքային զբաղվածության վրա:

Բանալի բառեր: Գյուղական կանանց աշխատանքային զբաղվածություն, լոգիստիկ ռեգրեսիա, Կովկասյան բարոմետր

Հայաստանում գյուղական կանանց աշխատանքային զբաղվածության վրա ազդող գործոնների վերլուծություն

Ռաֆաել Բախտավորյան և Արամայիս Դալլաբյան

Ներածություն

Կանայք ամբողջ աշխարհում էական դեր են խաղում գյուղատնտեսության զարգացման և աճի մեջ: Պետք է նշել, որ նրանք կազմում են գյուղատնտեսական աշխատուժի մոտ 43%-ը (Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն, 2011): Երբ խոսքը վերաբերում է գյուղատնտեսությանը, կանայք կատարում են տարբեր աշխատանքներ՝ տնային չվարձատրվող աշխատանքից մինչև ֆերմերային ու ձեռնարկատիրական: Միննույն ժամանակ, երբ խոսքը վերաբերում է աշխատանք գտնելուն, կանայք բախվում են ավելի կոշտ պայմանների հետ՝ պայմանավորված աշխատանքային շուկայում ձևավորված հանգամանքներով կամ պարզապես մշակութային առանձնահատկություններով: Այնուամենայնիվ, դժվար կլինի չհամաձայնվել այն պնդման հետ, որ գյուղատնտեսության գլոբալ զարգացմանը հասնելու համար պետք է հասնել առկա կանանց աշխատանքային ռեսուրսների ամբողջական և արդյունավետ օգտագործմանը: Այս խնդիրը իր լրջագույն նշանակությունն է ստանում այնպիսի զարգացող երկրում, ինչպիսին Հայաստանն է, որտեղ աշխատանքային ռեսուրսները ոչ միայն սահմանափակ են, այլ նաև ունեն նվազման միտում՝ պայմանավորված արտագաղթով (Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն, 2011):

1992թ. Խորհրդային միության փլուզումից հետո Հայաստանը հռչակեց իր անկախությունը և անցում կատարեց կենտրոնացված պլանային տնտեսությունից շուկայական տնտեսության: Անցման այս փուլում Հայաստանը անցել է սոցիալական, քաղաքական և տնտեսական մի շարք բարեփոխումների միջով, որոնք, մեծ հաշվով, աղետալի հետևանքներ են թողել ազգային տնտեսության վրա: Բազմաթիվ մարտահրավերներից մեկը, որին Հայաստանը ստիպված էր դիմակայել, գործազրկության խնդիրն էր: Քսան տարվա անկախությունից հետո գործազրկության խնդիրն դեռևս լուծում չի տրվել, և այս ոլորտում առկա են բազմաթիվ հարցեր:


Գործազրկության խնդիրը տարածված է բնակչության կանացի հատվածի մոտ: Պետք է նշել, որ 2011թ. Հայաստանում կանանց աշխատանքային զբաղվածության մակարդակը կազմել է 49%¹ (Համաշխարհային բանկ, 2013): Ի դեպ՝ այս ցուցանիշը գրեթե անփոփոխ է մնացել 2008-2011թթ. ընթացքում: Համեմատության համար նշենք, որ 2011թ. իգական սեռի աշխատանքային զբաղվածության մակարդակը Վրաստանում կազմել է 56%, իսկ Ադրբեջանում՝ 62% (Համաշխարհային բանկ, 2013),

¹ Համաշխարհային Բանկը սահմանում է կանանց աշխատանքային մասնակցության մակարդակը, որպես 15 և ավել տարիք ունեցող բնակչության համամասնություն, որոնք տնտեսապես ակտիվ են:

ինչը վկայում է, որ Հարավային Կովկասում կանանց աշխատանքային զբաղվածության ամենացածր մակարդակը Հայաստանում է:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կայքում առկա տվյալները օգնում են լույս սփռել մի շարք ժողովրդագրական գործոնների (տարիք և կրթական ձեռքբերումներ) և կանանց աշխատանքային զբաղվածության փոխազդեցության վրա, ինչպես նաև ներկայացնել Հայաստանում առկա աշխատանքային ռեսուրսների դինամիկայի ներկայիս միտումները: Այդ նպատակով ստորև ներկայացված գծապատկերներում արտացոլված են աշխատանքային ռեսուրսները տարիների ընթացքում, ինչպես նաև կանանց զբաղվածությունը՝ ըստ սոցիալ-տնտեսական փոփոխականների: Գծապատկեր 1-ը ցույց է տալիս տարիների ընթացքում Հայաստանում միջին տարեկան աշխատանքային ռեսուրսները²: Գծապատկեր 1-ի տվյալների համաձայն՝ միջին տարեկան աշխատանքային ռեսուրսները 2004թ-ից սկսած աճել են՝ 2009թ հասնելով իրենց առավելագույնին (մոտ 2,4 միլիոն մարդ), որից հետո անկում են ապրել:

Գծապատկեր 1. ՀՀ Աշխատանքային ռեսուրսները 2004-2008թթ.




*Աղբյուր: ՀՀԱՎԾ, Աշխատանք, 2009; 2013

Գծապատկեր 2-ը ցույց է տալիս ժամանակի ընթացքում զբաղվածների միջին տարեկան թիվը ըստ սեռի: Դիտարկող ժամանակահատվածի ընթացքում աշխատող տղամարդկանց թիվը գերազանցել է կանանց թվին: Աշխատող կանանց թվաքանակում նկատվել է մի փոքր աճման միտում, մինչդեռ աշխատող տղամարդկանց թվաքանակը ամբողջ ժամանակահատվածի ընթացքում տատանվել է մոտ 600 հազար մարդու շրջակայքում:

² ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը սահմանում է աշխատանքային ռեսուրսները որպես բոլոր տնտեսապես ակտիվ և ոչ-ակտիվ աշխատանքային տարիք ունեցող բնակչության գումար (15-75 տարիք):


Գծապատկեր 2. Աշխատանքային զբաղվածությունը ըստ սեռի 2004-2008թթ.



*Աղբյուր: ՀՀՍՎՄ, Տարեգիրք, 2009;2013

Գծապատկեր 3-ը ցույց է տալիս, որ 2008-2012թթ. ընթացքում կանանց աշխատանքային զբաղվածության մակարդակը ըստ տարիքային խմբերի: Ըստ գծապատկեր 3-ի՝ կանանց աշխատանքային զբաղվածության ամենացածր մակարդակը նկատվում է երիտասարդ տարիքում՝ հասնելով առավելագույնին 40-44 տարիքային խմբի մոտ՝ 13%, որից հետո նորից անկում է ապրում:


Գծապատկեր 3. Կանանց աշխատանքային զբաղվածությունը ըստ տարիքային խմբերի 2008-2011թթ.



*Աղբյուր: ՀՀՍՎՄ, Տարեգիրք, 2009;2013

Կանանց աշխատանքային զբաղվածության մակարդակը 2008-2012թթ. ընթացքում, ըստ կրթության աստիճանի, ներկայացված է գծապատկեր 4-ում, որում արտացոլված տվյալների համաձայն՝ կանանց աշխատանքային զբաղվածության ամենաբարձր մակարդակը բարձրագույն կամ հետբուհական կրթություն ունեցող կանանց մոտ է, բացառությամբ 2009 թվականի: Մեկ այլ եզրակացություն, որին կարելի է հասնել ուսումնասիրելով գծապատկեր 4-ը, այն է, որ այս ժամանակահատվածի ընթացքում կանանց աշխատանքային զբաղվածության մակարդակը աճել է կրթական ձեռքբերումներին զուգահեռ:

Գծապատկեր 4 Կանանց զբաղվածության գործակիցը ըստ կրթության 2008-2012թթ.



*Աղբյուր: ՀՀԱՎԾ, Տարեգիրք, 2009; 2013

Աշխատանքային առկա ռեսուրսների լրիվ օգտագործումը թույլ է տալիս երկրին արձանագրելու տնտեսական աճ: Ի հավելումն դրան՝ գործազուրկները զրկվում են նաև աշխատավարձից ձևավորվող եկամտից (Դիքսոն, 1996), ինչը նրանց անշահութաբեր իրավիճակի մեջ է դնում, համեմատած աշխատանք ունեցողների հետ, կապված բանակցելու ունակության և պոտենցիալ աղքատության դատապարտվելու առումով: Սա կարող է հանգեցնել ինքնավստահության վատթարացման և հավասար իրավունքների ու հնարավորությունների ապահովման խնդիրների: Այդ պատճառով կանանց աշխատանքային զբաղվածության մակարդակի բարելավումը ռազմավարական նշանակություն է ստանում և վերջինիս լուծումը պետք է ներառվի յուրաքանչյուր երկրի օրակարգում:

Այս վերլուծության հիմնական նպատակն է որոշել գյուղաբնակ կանանց սոցիալ-տնտեսական բնութագրիչները, որոնք ազդում են Հայաստանի աշխատաշուկայում նրանց մասնակցության վրա: Այդ նպատակով գնահատվել է

լոգիստիկ ռեգրեսիա՝ օգտագործելով տնային տնտեսությունների խաչաձև-հատվածական (cross-sectional) տվյալներ, որոնք հավաքագրվել են Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի Հայաստանում գտնվող տարածաշրջանային գրասենյակի կողմից՝ Կովկասյան բարոմետր 2012թ-ի ծրագրի շրջանակներում: Բացի այդ, օգտագործելով նույն տվյալները, կիրառվել է խաչաձև աղյուսակավորման (cross tabulation) մեթոդը՝ նկարագրելու տիպիկ գյուղաբնակ կնոջը, որը մասնակցել է Հայաստանի աշխատաշուկային:

Սույն հետազոտությունը իր ներդրումն է ունենում ժամանակակից գրականության մեջ այն առումով, որ գործնականում կենտրոնանում է բացառապես գյուղաբնակ կանանց վրա և ուղղակիորեն հաշվի է առնում լեզուների, համակարգչային հմտությունների և տնային տնտեսությունում երեխաների առկայության ազդեցությունը կանանց աշխատանքային զբաղվածության վրա: Այս ուսումնասիրության արդյունքները կարող են օգնել քաղաքականություն մշակողներին, հասարակական, ինչպես նաև միջազգային կազմակերպություններին ռազմավարություններ նախագծելիս, որոնք ուղղված են կանանց աշխատանքային զբաղվածության մակարդակի բարձրացմանը, հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովմանը, գենդերային հավասարության խթանմանը, գյուղական բնակավայրերի զարգացմանը և աղքատության կրճատմանը: Շահագրգիռ կողմերը, մասնավորապես, կունենան տեղեկատվություն այն մասին, թե որոնք են կանանց աշխատանքային զբաղվածության վրա ազդող գործոնները և կենտրոնանալով դրանց վրա, կարող են բարձրացնել զբաղվածության մակարդակը:

Ուսումնասիրությունը բաղկացած է հետևյալ բաժիններից: Հաջորդ բաժնում ներկայացված է Հայաստանում կանանց աշխատանքային զբաղվածության վերաբերյալ գրականության համառոտ ակնարկը, որին հաջորդում է մեթոդաբանության վերլուծությունը: Դրան հաջորդող բաժինը ներկայացնում է էմպիրիկ մոդելի նկարագրությունը: Տվյալները, որոնք օգտագործվել են այս ուսումնասիրության մեջ, ներկայացված են հաջորդ բաժնում: Այնուհետև, ներկայացվում և քննարկվում են գնահատման արդյունքները: Վերջին բաժինը ներկայացնում է ամփոփումը, քաղաքականության մասով և հետագա ուսումնասիրության համար առաջարկությունները:

Գրականության ակնարկ

Նախկինում կատարված բազմաթիվ ուսումնասիրություններ հետազոտել են կանանց աշխատանքային զբաղվածության խնդիրները (Լյոթհոլդ, 1978; Քոզան, 1980; Գրինհալի, 1980; Լայարդ, Բարտոն և Ջաբալզա, 1980; Շուլց, 1980; Սմիթ, 1980; Քիլինգսվորթ, 1983; Մրոգ, 1987; Ֆեյր և Մակունովիչ, 1997; Բլում, Քանինգ, Ֆինկ, Ֆինլայ, 2007; Թեվենոն, 2013): Մեծ թվով հետազոտություններ էլ ուսումնասիրել են կանանց աշխատանքային զբաղվածության և տնային տնտեսությունների սոցիալ-տնտեսական բնութագրիչների միջև փոխհարաբերությունները զարգացած և զարգացող այնպիսի երկրներում, ինչպիսիք են Բիրման (Մոն, 2000), Հյուսիսային

Կիպրոսը (Լիսսանիլեր և Բհաթի, 2001), Սիրիան (Նասսեր և Մեհչի, 2001), Պակիստանը (Հաֆիզ և Ահմադ, 2002; Ֆարիդի, Մալիկ և Բասիթ, 2009), Հարավային Աֆրիկան (Նթուլի, 2007), Թուրքիան (Դայիսոլու և Քիրդար, 2010), Բուալիան (Բրաթթի և Ստաֆֆուլանի, 2012), Հնդկաստանը (Սուչարիտա, 2013) և այլն:

Կանանց աշխատանքային զբաղվածության խնդիրը Հայաստանում ուսումնասիրվել է և նկարագրական (Հարությունյան, 2007, Եվրոպական հանձնաժողով, 2011) և էմպիրիկ գնահատման եղանակով (Բախտավորյան և Ջոհրաբյան, 2013ա, 2013բ): Մասնավորապես, Հարությունյանի կողմից հարցման են ենթարկվել 94 ռեսպոնդենտներ որոշելու համար գյուղատնտեսական ասոցիացիաների ձևավորման մեջ կանանց մասնակցության աստիճանը: Ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ կանանց մասնակցությանը նպաստող առավել կարևոր գործոններից են եղել ընտանիքի անդամների՝ այդ մասնակցության նկատմամբ բացասական վերաբերմունքը և հմտությունների բացակայությունը:

Եվրահանձնաժողովի կատարած աշխատանքը (2011) իրենից ներկայացնում էր հանրագումարային զեկույց մի շարք սոցիալ-տնտեսական խնդիրների վերաբերյալ, որոնք առկա էին Հարավային Կովկասի երկրներում (Հայաստան, Ադրբեյջան ու Վրաստան): Ջեկույցը ուսումնասիրում է կանանց աշխատանքային զբաղվածությունը՝ ընդգծելով Հայաստանում կանանց աշխատանքային զբաղվածության ամենացածր մակարդակը (42%) և տղամարդկանց աշխատանքային զբաղվածության նկատմամբ տարբերությունը (11%-13%): Այս իրավիճակը բացատրվում էր այն ավանդույթով, որ կանանցից ակնկալվում էր մնալ տանը և հոգ տանել երեխաների նկատմամբ: Ի հավելումն դրան՝ իրավիճակը սրվել էր աշխատաշուկայից կանանց դուրս գալով՝ պայմանավորված աշխատանքային սահմանափակ հնարավորություններով, հուսահատությամբ և արտագաղթով:

Բախտավորյանը և Ջոհրաբյանը (2013ա) գնահատել են լոգիստիկ մոդել որոշելու սոցիալ-տնտեսական գործոնները, որոնք ազդել են Հարավային Կովկասում կանանց աշխատանքային զբաղվածության վրա: Օգտագործված տվյալները հավաքագրվել էին ՀՌԿԿ-ի Կովկասյան բարոմետր 2010թ. ծրագրի շրջանակներում: Հայաստանի համար ընտրանքի չափը կազմված էր 18 տարեկան և բարձր 842 կին ռեսպոնդենտներից: Արդյունքները ցույց տվեցին, որ, այլ հավասար պայմաններում, մայրաքաղաքում բնակվելը նվազեցնում էր Հայաստանում աշխատանք գտնելու հավանականությունը: Այլ հավասար պայմաններում, Հայաստանում աշխատանք գտնելու հավանականությունը նվազում էր այն կանանց մոտ, որոնք համաձայնվում էին այն պնդման հետ, որ տղամարդիկ պետք է ավելի մեծ շանսեր ունենան աշխատանք գտնելու, երբ աշխատատեղերը քիչ են: Բացի այդ, այլ հավասար պայմաններում, տարիքը բացասաբար էր ազդում Հայաստանում աշխատանք գտնելու հավանականության վրա: Այլ հավասար պայմաններում, Հայաստանում աշխատանք ունենալու հավանականությունը աճում էր այն կանանց մոտ, որոնք ունեին առնվազն բարձրագույն կամ միջնակարգ տեխնիկական կրթության կամ ամուսնալուծված էին կամ այրի էին, և ում ընտանեկան ամսական եկամուտը

կազմում էր 401 դոլար կամ բարձր : Տնային տնտեսությունում որոշում կայացնողի սեռի ազդեցությունը և տնային տնտեսությունում առկա անդամների քանակը վիճակագրորեն նշանակալի չէին:

Բախտավորյանի և Ջոհրաբյանի մեկ այլ ուսումնասիրությունում (2013թ) օրդերային լոգիստիկ (ordered logit) ռեգրեսիայի միջոցով գնահատվել էր կին ռեսպոնդենտների սոցիալ-տնտեսական բնութագրիչների ազդեցությունը իրենց վերաբերմունքի վրա առ այն, որ տղամարդիկ աշխատանք ունենալու ավելի մեծ իրավունք ունեն՝ աշխատատեղերի սուղության դեպքում : Արդյունքների համաձայն՝ Հայաստանում, այլ հավասար պայմաններում, տղամարդկանց՝ աշխատանք գտնելու ավելի մեծ իրավունք ունենալու նկատմամբ բացասական վերաբերմունքի հավանականությունը ավելի մեծ էր ամուսնավուծված կամ այրիացած կանանց մոտ, քան թե ամուսնացածների, ինչպես նաև կանանց մոտ, որոնք գտնում էին, որ ընտանիքում հիմնական որոշում կայացնողը պետք է լինի կամ կինը կամ տղամարդը կնոջ հետ միասին՝ համեմատած այն կանանց հետ, որոնք կարծում էին, որ ընտանիքում որոշում կայացնողը տղամարդն է: Բնակավայրը, կրթական աստիճանը, տնային տնտեսության ամսական եկամուտը, աշխատանքային զբաղվածությունը, տարիքը և տնային տնտեսության անդամների քանակը վիճակագրորեն նշանակալի չէին:

Ի տարբերություն Հայաստանում կանանց աշխատանքային զբաղվածության վերաբերյալ նախորդ ուսումնասիրությունների՝ ներկայիս աշխատանքը կիրառում է էմպիրիկ մոտեցում և կենտրոնանում է բացառապես գյուղաբնակ կանաց վրա: Այս ուսումնասիրության մեկ այլ տարբերակիչ առանձնահատկությունն էլ այն է, որ այն ընդլայնում է Բախտավորյանի և Ջոհրաբյանի կողմից գնահատված մոդելը(2013ա)՝ դրա մեջ ներառելով տնային տնտեսությունում առկա երեխաների թվի փոփոխականը, ինչպես նաև փոփոխականներ անգլերեն և ռուսերեն լեզուների իմացության և համակարգչային հմտությունների հետ կապված:

Մեթոդաբանություն

Հայաստանի գյուղաբնակ կանանց աշխատանքային զբաղվածության հավանականության վրա ազդող տնային տնտեսությունների մի շարք սոցիալ-տնտեսական բնութագրիչների ազդեցությունը գնահատելու նպատակով իրականացվել է բինոմիական (binary) լոգիստիկ վերլուծություն: Սույն ուսումնասիրության մեջ օգտագործվող լոգիստիկ մոդելը ունի հետևյալ տեսքը՝

$$(1) P(y = 1|x) = \frac{\exp(\alpha'x)}{1 + \exp(\alpha'x)},$$

որտես P -ն պատահարի տեղի ունենալու հավանականությունն է, $y=1$, (երբ գյուղաբնակ կինը աշխատաշուկայում է), x -ը՝ անկախ սոցիալ-տնտեսական փոփոխականների վեկտոր է և α ՝ պարամետրերի վեկտոր է: Պատահարի տեղի

չունենալու հավանականությունը, $y=0$, (գյուղաբնակ կինը աշխատաշուկայում չէ), հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$(2) P(y = 0|x) = 1 - P(y = 1|x).$$

Կախյալ փոփոխականը հավանականությունների հարաբերության՝ շանսի, լոգարիթմիկ փոխակերպումից $\ln \frac{p}{1-p}$, և v պատահական սխալը ներառելուց հետո լոգիստիկ մոդելը ստանում է հետևյալ տեսքը՝

$$(3) \ln \left(\frac{p}{1-p} \right) = \alpha x + v.$$

Պարամետրերը գնահատելու համար կիրառվել է առավելագույն հավանականության մոտեցումը: Պարամետրերի գնահատումը կատարվել է՝ օգտագործելով շանսերի տոկոսային փոփոխությունը: Սկզբում շանսերը հաշվարկվել են լոգիստիկ ռեգրեսիայի պարամետրերի արժեքների էքսպոնենցիայի ճանապարհով (i.e., e^{α}), ապա հաշվարկվել են շանսերի տոկոսային փոփոխությունը՝ $(e^{\alpha} - 1) * 100$:

Էմպիրիկ մոդելի նկարագիր

Ենթադրվում է, որ երկանդամ (binary) կախյալ փոփոխականով լոգիստիկ մոդելի էմպիրիկ նկարագիրը, որը կառուցվել է որպես ֆունկցիա տնային տնտեսությունների մի շարք բնութագրիչներից, ազդելու է Հայաստանի գյուղաբնակ վայրերում կանանց աշխատուժի մասնակցության վրա և ունի հետևյալ տեսքը՝

$$(4) Pr(flfp = 1|) = F(\alpha_0 + \alpha_1 age + \alpha_2 numb_child + \alpha_3 eng_bgintadv + \alpha_4 rus_bgintadv + \alpha_5 comp_bgintadv + \alpha_6 edu_atleast_higher + \alpha_7 edu_sec_tech + \alpha_8 married + \alpha_9 div_sep_wid + \alpha_{10} inc_251_more)$$

որտեղ Pr -աշխատուժին կին ռեսպոնդենտների մասնակցության հավանականությունն է,

F -ը լոգիստիկ կումուլյատիվ խտության ֆունկցիան է,

α -պարամետրերը, որոնք պետք է գնահատվեն,

$flfp$ - կախյալ կեղծ փոփոխական է, որը ստանում է 1 արժեք, երբ կին ռեսպոնդենտը աշխատում է ընթացիկ ժամանակահատվածում (կես կամ մեկ դրույքով,

պաշտոնական, ոչ պաշտոնական կամ ինքնազբաղ դրամական եկամտի ստացմամբ) և 0 հակառակ դեպքում,

age - հարցվողի տարիքը,

$numb_child$ - հարցվողի ընտանիքում 18 տարեկանից ցածր երեխաների քանակն է,

eng_bgintadv– կեղծ փոփոխական է, որը ստանում է 1 արժեք, երբ ռեսպոնդենտի՝ անգլերեն լեզվի իմացությունը թույլ է, կամ միջին է կամ գերազանց մակարդակի վրա է և 0 հակառակ դեպքում,

rus_bgintadv –կեղծ փոփոխական է, որը ստանում է 1 արժեք, երբ ռեսպոնդենտի՝ ռուսերեն լեզվի իմացությունը թույլ է, միջին է կամ գերազանց է և 0 հակառակ դեպքում,

comp_bgintadv– կեղծ փոփոխական է, որը ստանում է 1 արժեք, երբ ռեսպոնդենտի՝ Microsoft Office –ի ծրագրերից (Word, Excel, and PowerPoint) օգտվելու հմտությունները թույլ են, միջին են կամ գերազանց և 0 հակառակ դեպքում,

edu_atleast_higher– կեղծ փոփոխական է, որը ստանում է 1 արժեք, երբ ռեսպոնդենտը գոնե ունի բարձրագույն կրթություն և 0 հակառակ դեպքում,

edu_sec_tech կեղծ փոփոխական է, որը ստանում է 1 արժեք, երբ ռեսպոնդենտը ունի միջնակարգ տեխնիկական կրթություն և 0 հակառակ դեպքում,

married կեղծ փոփոխական է, որը ստանում է 1 արժեք, երբ ռեսպոնդենտը ամուսնացած է և 0 հակառակ դեպքում,

div_sep_wid կեղծ փոփոխական է, որը ստանում է 1 արժեք, երբ ռեսպոնդենտը ամուսնալուծված է կամ առանձին է ապրում կամ այրիացած է և 0 հակառակ դեպքում:

inc_251_more կեղծ փոփոխական է, որը ստանում է 1 արժեք, երբ ռեսպոնդենտի ամսական եկամուտը 251 դոլար է և բարձր, և 0 հակառակ դեպքում:

Բացառությամբ *age* և *numb_child* փոփոխականների, բոլոր փոփոխականները մոդելի մեջ մտցվել են որպես կեղծ փոփոխականներ՝ համապատասխան բազային կատեգորիաներով: Մասնավորապես, *eng_bgintadv*, *rus_bgintadv*, and *comp_bgintadv* –ի համար բազային կատեգորիաներն են համապատասխանաբար անգլերենի, ռուսերենի և համակարգչային տարրական գիտելիքների բացակայությունը:

Edu_atleast_higher և *edu_sec_tech* համար բազային կատեգորիան բարձրագույն կրթությունից ցածրն է: *Married* and *div_sep_wid* –ի համար բազային կատեգորիան միայնակ լինելն է: Վերջապես, *inc_251_more* համար բազային կատեգորիան տնային տնտեսության՝ 251 դոլարը չգերազանցող ամսական եկամուտն է:

Ակնկալվում էր, որ տարիքը դրական էր ազդելու կանանց աշխատանքային զբաղվածության հավանականության վրա՝ ելնելով փորձառությունից և հմտություններից, որոնք կանայք ձեռք են բերում տարիների ընթացքում: Այնուամենայնիվ, սոցիալական ավանդույթների և նորմերի առկայությունը այս կապը կարող է դարձնել բացասական: Ընտանիքում երեխաների առկայությունը ենթադրվում էր, որ դրական կազդի կանանց աշխատանքային զբաղվածության վրա, եթե առկա լինեին երեխաների խնամքի հաստատություն, հակառակ դեպքում այդ ազդեցությունը կարող է լինել բացասական:

Ակնկալվում էր, որ ռուսերենի, անգլերենի իմացությունը և համակարգչային հմտությունները դրական կազդ են կանանց աշխատանքային զբաղվածության վրա, քանի որ համեմատաբար ավելի գրագետ կանայք աշխատանք գտնելու ավելի մեծ շանսեր ունեն: Հիմնվելով մարդկային կապիտալի տեսության վրա՝ ենթադրվում էր, որ կրթությունը դրական կազդ էր կանանց աշխատանքային զբաղվածության

հավանականության վրա: married փոփոխականի ռեգրեսիայի գործակիցը ենթադրվում էր, որ կարող է լինել և դրական և բացասական, քանի որ ամուսնացած կանանց դեպքում կանանց աշխատանքային զբաղվածությունը սկզբում ավելանում, իսկ հետո պակասում էր (Գոլդին, 1994): div_sep_wid փոփոխականի ռեգրեսիայի գործակիցը ենթադրվում էր, որ կլինի դրական, քանի որ ըստ Նեֆի, Սենի և Քլինգի «այրիները և ամուսնալուծվածները, կարող են հանդիպել ավելի քիչ մշակութային և սոցիալական արգելքների, որոնք խանգարում են տանից դուրս աշխատելու և հաճախ իրենց բնակավայրերից ժամանակավորապես տեղափոխվելու և այդ հարցում նրանք ավելի ազատ են, քանի որ չունեն ամուսին, որը կխանգարեր նրանց դա անել» (Նեֆ, Սեն և Քլինգ, 2012): Եվ վերջապես, համաձայն աշխատանքի նորդասական տեսության՝ ակնկալվում էր, որ բարձր եկամտի մակարդակը բացասական կազդի գյուղաբնակ կանանց աշխատուժի մասնակցության հավանականության վրա:

Տվյալներ

Սույն հետազոտության մեջ օգտագործվել են Կովկասյան բարոմետր 2012 ծրագրի շրջանակներում Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի՝ Հայաստանում գտնվող տարածաշրջանային գրասենյակի կողմից կատարված տնային տնտեսությունների հարցումների տվյալները: Ընտրանքը ներառում է Հայաստանի գյուղական վայրերից 395 կին ռեսպոնդենտների, որոնք հարցման ժամանակ 18 տարեկան և բարձր էին: Ուսումնասիրության մեջ օգտագործվող սոցիալ-տնտեսական փոփոխականները ներառում են զբաղվածությունը, տարիքը, ընտանիքում 18 տարեկանից փոքր երեխաների թիվը, անգլերեն, ռուսերեն լեզուների իմացությունը, համակարգչային հմտությունները, կրթական մակարդակը, ամուսնական կարգավիճակը, տնային տնտեսության ամսական եկամուտների մակարդակը:

Կախյալ փոփոխականը՝ զբաղվածության կարգավիճակը, կառուցվել է՝ ելնելով հետևյալ հարցի պատասխաններից. «Դուք այժմ աշխատո՞ւմ եք: Այդ աշխատանքը կարող է լինել կես կամ լրիվ դրույք, պաշտոնական, ոչ պաշտոնական կամ ինքնազբաղվածություն, սակայն այն հարկավոր է ապահովվի դրամական եկամուտ»: Ընտանիքում առկա 18 տարեկանից փոքր երեխաների տարիքը և քանակը ինքընատինքյան հասկանալի են: Անգլերեն և ռուսերեն լեզուների իմացությունը ներառված է հետազոտության մեջ՝ չափելու հիմնական լեզվական ունակությունների ազդեցությունը, որոնք բազմաթիվ ոլորտներում պահանջվում են աշխատանքի ընդունվելու համար: Համակարգչային հմտությունների առկայությունը հատկապես առնչվում է ռեսպոնդենտի՝ Microsoft Office-ի ծրագրերից օգտվելու կարողության հետ: Ներկայումս շատ մասնագիտությունների համար լեզուների իմացության հետ մեկտեղ պահանջվում են նաև համակարգչային հմտություններ:

Կրթական մակարդակը և ամուսնական կարգավիճակը իրենցից ներկայացնում են կին ռեսպոնդենտների կրթական ամենաբարձր մակարդակի և

ընթացիկ ամուսնական կարգավիճակի վերաբերյալ ինֆորմացիա: Տնային տնտեսության ամսական եկամուտը դասակարգվում է՝ հիմնվելով ԱՄՆ դոլարով չափվող եկամուտի որոշակի շեմի վրա: 2012թ. ՀՌԿԿ-ի կողմից հավաքագրած տվյալները թույլ են տալիս քանակապես արտահայտել վերոնշյալ փոփոխականները և գնահատել մոդելի պարամետրերի արժեքները:

Յուրաքանչյուր փոփոխականի հետ կապված հարցվողների տոկոսները ներկայացված են աղյուսակ 1-ում: Ինչպես ցույց է տալիս աղյուսակ 1՝ ռեսպոնդենտների մոտ երեք քառորդը (74.91%) գործազուրկ էին: Ռեսպոնդենտների միջին տարիքը 48 տարեկան էր, իսկ երեխաների միջին թիվը մի փոքր գերազանցում էր մեկը՝ յուրաքանչյուր տնային տնտեսության հաշվով: Ռեսպոնդենտների մոտ երեք քառորդը չգիտեր տարրական անգլերեն (72.69%) և չունեի համակարգչային գիտելիքներ (71.40%), մինչդեռ ռեսպոնդենտների մոտ 87%-ը գիտեր ռուսերեն գոնե սկսնակի մակարդակով: Հարցվողների մոտ 60%-ի կրթական մակարդակը բարձրագույնից ցածր էր և մոտ երկու երրորդը (65.3%) ամուսնացած էր: Ռեսպոնդենտների մոտ 80%-ի ընտանեկան ամսական եկամուտը չէր գերազանցում 250 ԱՄՆ դոլարը: Այսպիսով, Հայաստանի գյուղաբնակ կնոջ պատկերը հետևյալն էր. քառասուն անց, ամուսնացած, գործազուրկ, առանց բարձրագույն կրթության և անգլերեն կամ համակարգչի իմացությամբ, սակայն առնվազն ռուսերենի իմացությամբ, ունի միջինը մեկ երեխա, ապրում է ընտանիքում, որտեղ ամսական եկամուտը չի գերազանցում 250 ԱՄՆ դոլարը:

Գնահատման արդյունքները

Գնահատված լոգիստիկ մոդելի արդյունքները քննարկելուց առաջ ներկայացնենք և բացատրենք խաչաձև դասակարգմամբ ստացված արդյունքները, որոնք ուսումնասիրում են գյուղաբնակ կնոջ աշխատուժի մասնակցության և մի շարք փոփոխականների միջև կապը:

Այս խաչաձև դասակարգման տվյալները ներկայացված են աղյուսակ 2-ում՝ գյուղաբնակ կանանց աշխատուժի մասնակցության և չմասնակցության մասերով: Այնուամենայնիվ, արդյունքները հիմնականում քննարկված են աշխատուժին մասնակցող կանանց մասով: Ինչպես ցույց է տալիս աղյուսակ 2-ը՝ աշխատող կնոջ միջին տարիքը 45-ն էր, և նա ունի 1 երեխա:

Աշխատող կանանց մոտ երեք քառորդը (71.21%) չգիտեն տարրական անգլերեն, իսկ 59%-ը չունեն համակարգչային հմտություններ՝ չկարողանալով օգտվել Microsoft Office-ի ծրագրերից: Այնուամենայնիվ, նրանց մոտ 92%-ը տիրապետում են առնվազն ռուսերենի բազային իմացության: Կանանց մոտ 41%-ի կրթությունը չի հատում բարձրագույնի շեմը: Նրանց երկու երրորդը (66.58%) ամուսնացած են: Աշխատող կանանց մոտ երեք քառորդի (71.05) ընտանիքի եկամուտները չեն գերազանցում ամսական 250 ԱՄՆ դոլարը:

Աղյուսակ 1. Հարցված կանանց տոկոսները՝ ըստ սոցիալ տնտեսական փոփոխականների ՀՀ գյուղական բնակավայրերում, N=395

Փոփոխականներ	%
Զբաղվածության կարգավիճակ	
Զբաղված	25.09
Գործազուրկ	74.91
Տարիք	
Տարիք (միջին)	48.30
Մինչև 18 տարեկան երեխաների քանակ	
Երեխաների քանակ (միջին)	1.21
Անգլերենի իմացություն	
Տարրականից ցածր	72.69
Սկսնակ կամ միջանկյալ կամ առաջադեմ	27.31
Ռուսերենի իմացություն	
Տարրականից ցածր	13.51
Սկսնակ կամ միջանկյալ կամ առաջադեմ	86.49
Համակարգչի իմացություն (Microsoft Office)	
Տարրականից ցածր	71.40
Սկսնակ կամ միջանկյալ կամ առաջադեմ	28.60
Կրթություն	
Առնվազն բարձրագույն	13.96
Բարձրագույնից ցածր	60.35
Միջնակարգ տեխնիկական	25.69
Ամուսնական կարգավիճակ	
Ամուսնացած	65.53
Միայնակ	7.18
Ամուսնալուծված կամ առանձին ապրող կամ այրի	27.29
Ընտանիքի ամսական եկամուտ (ԱՄՆ դոլար)	
0-250	79.81
251 կամ ավել	20.19

Աղյուսակ 2. Հարցված կանանց տոկոսները ըստ սոցիալ տնտեսական փոփոխականների ՀՀ գյուղական բնակավայրերում, N=96 աշխատող կանայք և N=299 չաշխատող կանանց համար

	Աշխատող, %	Չաշխատող, %
Տարիք		
Տարիք (միջին)	44.95	49.42
Մինչև 18 տարեկան երեխաների քանակ		
Երեխաների քանակ (միջին)	1.14	1.24
Անգլերենի իմացություն		
Տարրականից ցածր	71.21	73.18
Սկսնակ կամ միջանկյալ կամ առաջադեմ	28.79	26.82
Ռուսերենի իմացություն		
Տարրականից ցածր	8.15	15.30
Սկսնակ կամ միջանկյալ կամ առաջադեմ	91.85	84.70
Համակարգչի իմացություն (Microsoft Office)		
Տարրականից ցածր	58.68	75.66
Սկսնակ կամ միջանկյալ կամ առաջադեմ	41.32	24.34
Կրթություն		
Առնվազն բարձրագույն	31.38	8.12
Բարձրագույնից ցածր	40.94	66.85
Միջնակարգ տեխնիկական	27.68	25.03
Ամուսնական կարգավիճակ		
Ամուսնացած	66.58	65.18
Միայնակ	8.62	6.70
Ամուսնալուծված կամ առանձին ապրող կամ այրի	24.81	28.12
Ընտանիքի ամսական եկամուտ (ԱՄՆ դոլար)		
0-250	71.05	82.75
251 կամ ավել	28.95	17.25

Ամփոփելով պետք է նշել, որ Հայաստանում տիպիկ գյուղաբնակ աշխատող կինը քառասուն անց է, ամուսնացած է, չունի բարձրագույն կրթություն, չգիտի անգլերեն և համակարգիչ, բայց գոնե գիտի ռուսերեն, ունի մեկ երեխա, իսկ նրա ընտանիքի ամսական եկամուտը չի գերազանցում 250 ԱՄՆ դոլարը:

Աղյուսակ 3-ում ներկայացված են լոգիստիկ ռեգրեսիայի գործակիցների արժեքները, *p*-հավանականությունների, շանսերի և շանսերի տոկոսային փոփոխության հետ մեկտեղ, որոնք ստացվել են STATA ծրագրային փաթեթը միջոցով: Գնահատման արժեքները քննարկված են հաշվի առնելով միայն վիճակագրորեն նշանակալի շանսերի տոկոսային փոփոխությունները՝ օգտագործելով նշանակալիության 10% մակարդակը:

Հնարավոր մուլտիկոլինիարության հարցը այս ուսումնասիրության մեջ դիտարկվել է՝ հաշվարկելով դիսպերսիայի ինֆլյացիայի գործոնը (Variance Inflation Factor)՝ բոլոր անկախ փոփոխականների համար (Տես հավելված 1-ը): Բոլոր VIF-երը 10-ից պակաս էին, ինչը նշանակում է, որ մուլտիկոլինիարության խնդիր չկար:

Տնային տնտեսության ամսական եկամտի փոփոխականում էնդոգենության առկայությունը գնահատելու համար STATA-ում կիրառվել է «*treatreg*» ընթացակարգը՝ օգտագործելով այլ անկախ փոփոխականները որպես գործիք: Ընթացակարգի արդյունքները ցույց են տվել, որ գրոյական հիպոթեզը (էնդոգենության բացակայություն) չի կարող հերքվել 5% նշանակալիության մակարդակում (*p*-value 0.9 էր):

Լոգիստիկ ռեգրեսիայի մոդելի գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ մի քանի պարամետրերի նշանները չեն համապատասխանում ակնկալիքներին: Մասնավորապես, հակառակ մեր սպասումների՝ յուրաքանչյուր լրացուցիչ տարի կրճատում է աշխատելու հավանականությունը 2.95%-ով՝ այլ հավասար պայմաններում: Սա կարող է բացատրվել այն փաստով, որ այն աշխատանքը, որ գյուղաբնակ կանայք ստիպված են կատարել, բավականին ծանր է և պահանջում է ֆիզիկական ուժ, ինչը տարիքի ավելացմանը զուգահեռ կանայք դժվարանում են կատարել: Այլապես այս բացահայտումը կարող էր վերագրվել գյուղական համայնքներում աշխատանքային հնարավորությունների նվազմանը և կանանց շրջանում տարածված այն պատկերացումներին, որ սակավ աշխատատեղերի դեպքում տղամարդիկ ավելի մեծ իրավունք ունեն աշխատանք ստանալու (Բախտավորյան, Զոհրաբյան, 2013ա):

Անգլերենից հիմնարար գիտելիքներ չունենալու համեմատ, գոնե տարրական գիտելիքներ ունենալը կրճատում է աշխատանք գտնելու հավանականությունը 43.6%-ով՝ այլ հավասար պայմաններում: Այս արդյունքը չի համապատասխանում մեր սպասումներին և կարող է բացատրվել գյուղաբնակ վայրերում անգլերեն լեզվի սահմանափակ կիրառմամբ, որը հիմնական գործածվում է դպրոցում անգլերեն լեզուն դասավանդելիս:

Աղյուսակ 3. Լոգիստիկ ռեգրեսիայի գործակիցներ, p-արժեքները (փակագծերում), շանսեր և շանսերում տոկոսային փոփոխություն, N = 395

	Գործակից	Շանս	% փոփոխ. շանսերում
Տարիք			
<i>Age</i>	-0.030 (0.007)	0.970	-2.95
Մինչև 18 տարեկան երեխաների քանակը			
<i>numb_child</i>	-0.126 (0.226)	0.882	-11.81
Անգլերենի իմացություն (բազային կատեգորիա՝ տարրականից ցածր)			
<i>eng_bgintadv</i>	-0.573 (0.081)	0.564	-43.60
Ռուսերենի իմացություն (բազային կատեգորիա՝ տարրականից ցածր)			
<i>rus_bgintadv</i>	-0.185 (0.662)	0.831	-16.87
Համակարգչի իմացություն (Microsoft Office) (բազային կատեգորիա՝ տարրականից ցածր)			
<i>comp_bgintadv</i>	0.072 (0.851)	1.074	7.44
Կրթություն (բազային կատեգորիա՝ բարձրագույն կրթությունից ցածր)			
<i>edu_atleast_higher</i>	1.988 (0.000)	7.298	629.81
<i>edu_sec_tech</i>	0.667 (0.022)	1.948	94.83
Ամուսնական կարգավիճակ (բազային կատեգորիա՝ միայնակ)			
<i>Married</i>	0.622 (0.218)	1.863	86.31
<i>div_sep_wid</i>	1.155 (0.066)	3.173	217.28
Ընտանիքի ամսական եկամուտ (ԱՄՆ դոլլար) (բազային կատեգորիա՝ \$251 պակաս)			
<i>inc_251_more</i>	0.413 (0.146)	1.511	51.14
<i>Constant</i>	-0.582 (0.434)		

Ինչպես ակնկալվում էր՝ նվազագույնը բարձրագույն կրթություն ունենալը մեծացնում է աշխատանք ունենալու հավանականությունը 629.81%-ով՝ այլ հավասար պայմաններում : Բացի այդ, ինչպես և ակնկալվում էր, միջնակարգ տեխնիկական կրթության առկայությունը մեծացնում է աշխատանք ունենալու հավանականությունը 94.83%-ով՝ այլ հավասար պայմաններում :

Ինչպես ակնկալվում էր՝ ամուսնալուծված կամ առանձին ապրելը կամ այրի լինելը մեծացնում է աշխատելու հավանականությունը 217.28%-ով՝ համեմատած չամուսնացած կանանց հետ՝ այլ հավասար պայմաններում: Ընտանիքում երեխաների թիվը, ռուսերենի և համակարգչի իմացությունը, ամուսնացած լինելը և եկամուտների ամսական մակարդակը վիճակագրորեն նշանակալի աղեցություն չէին ունեցել Հայաստանի գյուղաբնակ վայրերում կանանց աշխատանքային զբաղվածության վրա:

Ամփոփում, քաղաքականության մասով և հետագա ուսումնասիրության համար առաջարկություններ

Սույն վերլուծությունում գնահատվել է լոգիստիկ մոդել՝ որոշելու տարբեր սոցիալ-տնտեսական բնութագրիչների ազդեցությունը Հայաստանում կանանց աշխատուժի մասնակցության վրա՝ օգտագործելով ՀՌԿԿ-ի Հայաստանում գտնվող տարածաշրջանային գրասենյակի կողմից 2012թ. կատարված հարցման տվյալները: Մասնավորապես, ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ տարիների ավելացմանը զուգահեռ նվազում է կանանց աշխատելու հավանականությունը՝ այլ հավասար պայմաններում: Գյուղաբնակ կանանց մոտ, որոնք ունեն գոնե տարրական գիտելիքներ անգլերենից, հավանականությունը ավելի փոքր է աշխատանք ունենալու, քան այն կանանց դեպքում, որոնք չգիտեն անգլերեն՝ այլ հավասար պայմաններում:

Գյուղաբնակ կանանց մոտ, որոնք ունեն գոնե բարձրագույն կամ միջնակարգ տեխնիկական կրթություն, աշխատանք ունենալու հավանականությունը ավելի մեծ է, քան այդ կրթությունը չունեցող կանանց մոտ՝ այլ հավասար պայմաններում: Համեմատած չամուսնացած կանանց հետ՝ ամուսնալուծված կամ առանձին ապրող կամ այրի կանանց մոտ աշխատուժի շուկային մասնակցելու հավանականությունը ավելի մեծ է՝ այլ հավասար պայմաններում: Տնային տնտեսությունում երեխաների թիվը, ռուսերենի և համակարգչի իմացությունը, ամուսնացած լինելը և ընտանիքի ամսական եկամուտի մակարդակը վիճակագրորեն նշանակալի գործոններ չէին:

Բացի այդ, խաչաձև աղյուսակավորման արդյունքները ցույց տվեցին, որ Հայաստանի տիպիկ գյուղաբնակ կիներ, որը աշխատաշուկայում է, քառասուն անց է, ամուսնացած, չունի բարձրագույն կրթություն, չգիտի անգլերեն և համակարգիչ, բայց ունի ռուսերենի տարրական իմացություն, ունի մեկ երեխա, իսկ նրա ընտանիքի ամսական եկամուտը չի գերազանցում 250 ԱՄՆ դոլարը:

Կանանց աշխատուժի շուկայում մասնակցության բարձր մակարդակը նպաստում է մարդկային կապիտալի ձևավորմանը, բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը, կրճատում է աղքատությունը և նպաստում ընդհանուր

սոցիալ-տնտեսական զարգացմանը: Դրա հետ կապված՝ կանանց շրջանում աշխատանքային զբաղվածության ոլորտի քաղաքականությունը պետք է ձևակերպվի և իրականացվի հաշվենկատ կերպով: Ստորև ներկայացված են քաղաքականության մասով մի շարք առաջարկություններ, որոնք բխում են սույն ուսումնասիրության արդյունքներից և ուղղված են Հայաստանի գյուղաբնակ կանանց աշխատանքային զբաղվածության բարելավմանը՝

1. Ստեղծել աշխատատեղեր տարեց կանանց համար, որոնց կատարման համար ավելի քիչ ֆիզիկական կարողություններ և ավելի շատ գիտելիքներ և փորձ կպահանջվի, որը կանայք կուսակաճ կլինեն տարիների ընթացքում:
2. Բարենպաստ պայմաններ ստեղծել միջազգային գործակալությունների համար, որոնց թիրախում կլինի գյուղական տարածաշրջանների զարգացումը և որոնք ներդրումներ կկատարեն և կստեղծեն աշխատատեղեր գյուղական վայրերում, ինչի շնորհիվ էլ ավելի մեծ թվով կանայք կունենան աշխատելու հնարավորություն՝ օգտագործելով անգլերեն լեզվի իրենց իմացությունը:
3. Ստեղծել, հասանելիություն ապահովել և խրախուսել բարձրագույն կրթական և միջնակարգ տեխնիկական հաստատություններ ընդունվելը:

Թեև սույն ուսումնասիրությունից ստացված արդյունքները տրամադրում են Հայաստանում կանանց աշխատուժի շուկային մասնակցության վերաբերյալ օգտակար տեղեկատվություն, արժի նշել նաև հետագա ուսումնասիրությունների համար մի քանի առաջարկություններ: Առաջին՝ սույն ուսումնասիրությունը ներառում էր ընտանիքում 18 տարեկանից փոքր երեխաների թիվը՝ գնահատելու վերջինիս ազդեցությունը կանանց աշխատանքային զբաղվածության վրա: Այնուամենայնիվ, հետագա հետազոտությունների ժամանակ այս փոփոխականը կարող է բաժանվել առանձին տարիքային խմբերի, ինչպիսիք են՝ նախադպրոցական երեխաներ (մինչև 6 տարեկան), մինչ դեռահասական շրջանում գտնվող երեխաներ (6-12 տարեկան) և դեռահասներ (13-17 տարեկան), քանի որ տարբեր տարիքի երեխաները պահանջում են խնամքի և նրանց վրա ծախսվող ժամանակի տարբեր չափաբաժին:

Երկրորդ՝ տարիքը արտահայտող փոփոխականը իրենից ներկայացնում էր հարցվողի փաստացի տարիքը: Դրա փոխարեն հետագա ուսումնասիրությունների ժամանակ այդ փոփոխականը կարելի է բաժանել առանձին տարիքային խմբերի (օրինակ 15-19, 20-24...65 և բարձր): Տարիքային այս բաշխումը թույլ կտա որոշելու կանանց աշխատանքային զբաղվածության մակարդակը տարիքային տարբեր խմբերի համար:

Երրորդ՝ ապագայում կատարվելիք ուսումնասիրության ժամանակ պետք է ավելացնել մի փոփոխական, որը ցույց կտա, թե ընտանիքի գլուխը միայն տղամարդն է, թե միայն կինն է և թե երկուսը միասին՝ պարզելու համար, թե ով է ընտանիքում որոշում կայացնողը: Այս փոփոխականը կարևոր է, քանի որ ընտանիքի ղեկավար տղամարդու առկայությունը կարող է խանգարել կնոջը փնտրելու և գտնելու աշխատանք՝ ելնելով Հայաստանի հասարակության մեջ խիստ արմատացած սոցիալական բարքերից և սովորույթներից:

Չորրորդ՝ ապագայում կատարվելիք ուսումնասիրությունը պետք է պարունակի փոփոխական, որը ցույց կտա ամուսնու կրթական մակարդակը: Ենթադրվում է, որ սա բացասական կազդի կնոջ աշխատելու հանգամանքի վրա, քանի որ կրթություն ունեցող տղամարդու դեպքում հավանականությունը ավելի մեծ է, որ նա կլինի ընտանիքի կերակրողը և կցանկանա, որ կինը մնա տանը և կատարի կենցաղային աշխատանքներ: Միևնույն ժամանակ կրթություն ունեցող տղամարդը կարող է ցուցաբերել լայնախոհություն իր կնոջ՝ աշխատանքային զբաղվածության առնչությամբ, ինչն էլ դրական կազդի վերջինիս աշխատուժին մասնակցելու վրա:

Հինգերորդ՝ եկամուտի փոփոխականը հաշվի էր առնում ամբողջ ընտանիքի եկամուտը: Հետագա ուսումնասիրության ժամանակ այս եկամուտը պետք է տրոհվի տնային տնտեսության յուրաքանչյուր անդամի կողմից վաստակած եկամտի, ինչը թույլ կտա պարզել, թե ինչպես է ընտանիքի մյուս անդամի եկամուտը ազդում կնոջ աշխատանքային զբաղվածության վրա: Վերջապես, հետագայի համար առաջարկվում է ավելացնել դիտարկումների թիվը՝ արդյունքները ավելի ներկայացուցչական և ընդհանրական դարձնելու համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. Բախտավորյան, Ռ., և Զոհրաբյան Ս., 2013ա, «Հարավային Կովկասում կանանց աշխատանքային զբաղվածության վրա ազդող գործոնների բացահայտում»:
Աշխատանքային զեկույց:
2. Բախտավորյան, Ռ., և Զոհրաբյան Ս., 2013ա., «Հարավային Կովկասում կանանց վերաբերմունքը աշխատանք ունենալու նկատմամբ վրա ազդող գործոնների ուսումնասիրում»:
Աշխատանքային զեկույց:
3. Բազու, Կ., 2001, «Մեռ և իրավունք: Իշխանության հաշվեկշռի էնդոգենությամբ սահմանված ընտանիքի վարքագծի մոդելը»:
Քորնելի համալսարան, չիրապարակված ձեռագիր:
4. Բլում, Դ.Ե., Դ. Քեննինգ, Գ. Ֆինք, և Ջ.Ե.Ֆինլեյ., 2007, «Պտղաբերություն, կանանց աշխատանքային զբաղվածություն և ժողովրդագրական շահութաբաժինը»:
Ազգային բյուրոյի տնտեսական հետազոտություններ: Աշխատանքային զեկույց:
5. Բրատտի, Ս., և Ս. Ստաֆֆոլանի, 2012, « Իտալիայում կանանց աշխատանքային զբաղվածության միկրոտնտեսական վերլուծություն»:
Աշխատանքի տնտեսագիտություն, AIEL սերիա. Springer-Verlag Berlin Heidelberg.
6. Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան, 2011, «Սոցիալական պաշտպանությունը եւ սոցիալական ներգրավվածությունը Հայաստանում»:
Տարածաշրջանային զեկույցի ամփոփում:
7. Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ, 2013, «Կովկասյան բարոմետր» [http://crrc.am/research-and-surveys/caucasusbarometer /documentation](http://crrc.am/research-and-surveys/caucasusbarometer/documentation) (Մեպտեմբեր, 2013 թ.):

8. Քոզան Ջ., 1980, «Ամուսնացած կանանց աշխատուժի առաջարկ: Այլընտրաբային գնահատման ընթացակարգերի համեմատություն»: Կանաց Աշխատուժի առաջարկ, խմբ. Ջ. Սմիթ. Պրինստոն: Պրինստոնի համալսարանի խմբագրություն, 90-118:
9. Դայիողլու, Մ., և Մ.Ջ. Քիրդար, 2010, « Թուրքիայում կանանց աշխատանքային զբաղվածության վրա ազդող որոշիչները և միտումները»: Թուրքիայի Հանրապետության Պետական քաղաքականության մշակման կազմակերպություն եւ Համաշխարհային Բանկի Բարեկեցության եւ սոցիալ-քաղաքական վերլուծական աշխատանքների ծրագիր. Աշխատանքային զեկույց 5:
10. Դիքսոն. Ս., 1996, «Աշխատանքային զբաղվածությունը վերջին տասնամյակում»: Աշխատանքային շուկայի տեղեկագիր, 2: 71-78.
11. Եվրոպական հանձնաժողով, 2011, «Սոցիալական պաշտպանվածությունը և սոցիալական ընդգրկումը Հայաստանում, Ադրբեջանում եւ Վրաստանում»: Ջեկույց:
12. Ֆեյր, Ռ.Ս., և Դ.Ջ. Մակունովիչ, 1997, «Կանանց աշխատանքային զբաղվածության հետազոտում 20-24» Կոուլսի հիմնադրամ, քննարկման փաստաթղթեր 1116, Կոուլս հիմնադրամի տնտեսագիտական հետազոտությունների համար, Յելի Համալսարան:
13. Ֆարիդի, Մ.Ջ., Ու Մալիկ, և Ա.Բ. Բասիթ, 2009, «Պակիստանում կրթության ազդեցությունը կանանց զբաղվածության վրա: Առաջնային տվյալների վերլուծության հիման վրա Էմպիրիկ հետազոտություն»: Պակիստանի հասարակական գիտությունների ամսագիր 29: 127-140:
14. Պարենամթերքի և գյուղատնտեսության կազմակերպություն, 2011, «Կանանց դերը գյուղատնտեսությունում»: Աշխատանքային զեկույց # 11-02: <http://www.fao.org/docrep/013/am307e/am307e00.pdf>.
15. Գոլդին, Բ., 1994, "Մ-աձև կանանց զբաղվածության ֆունկցիան տնտեսական զարգացման եւ տնտեսական պատմության մեջ» NBER Աշխատանքային զեկույց, թիվ 4707:
16. Գրինհալք, Բ., 1980, «Մեծ Բրիտանիայում ամուսնացած կանանց աշխատանքային ժամերը և զբաղվածությունը»: Օքսֆորդ տնտեսական հոդվածներ, 32: 296-318:
17. Հաֆեզ, .Ա, և Ե. Ահմադ, 2002, «Փանջաբ շրջանում ամուսնացած և կրթված կանանց աշխատուժին մասնակցելու որոշման գործոնների որոշում»: Պակիստանի սոցիալական և տնտեսական ակնարկ 1:75-88:
18. Հարությունյան, Ն., 2007, «Գյուղական միջավայրում կանանց գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիայում մասնակցության պատճառահետևանքային վերլուծություն»: [Http://icare.am/icare/publications](http://icare.am/icare/publications):
19. Քիլինգսվորթ, Մ.Ռ., 1983, «Աշխատուժի առաջարկ»: Քեմբրիջ; Քեմբրիջի համալսարանի հրատարակչություն:

20. Լայարդ, Ռ, Մ Բարթոն, եւ Ա. Ջաբալզա, 1980, «Ամուսնացած կանանց զբաղվածությունը եւ աշխատաժամերը»: Էկոնոմիկա, 47: 51-72:
21. Լեութորդ, Ջ., 1978, «Ամուսնացած կանանց աշխատած ժամերի վրա հարկերի հետևանքները»: Արդյունաբերական և աշխատանքային կապերի ակնարկ, 31:520-526:
22. Լիզանիլեր, Ֆ.Գ., և Ֆ. Բհաթթի, 2001, «Կանանց աշխատանքային զբաղվածության որոշիչները: Հյուսիսային կիպրոսի ուսումնասիրություն»: Սոցիալական, տնտեսական և բիզնես ուսումնասիրությունների ակնարկ, 5/6:209-226:
23. Մոն, Մ., 2000, «Բիրմայում կանանց աշխատանքային զբաղվածության որոշիչները: Սոցիալ-տնտեսական հետազոտական տվյալների էմպիրիկ վերլուծություն»: ABAC, ամսագիր, 21.
24. Մրոզ, Ս., 1987 «Ամուսնացած կանանց աշխատաժամանակի տնտեսական և վիճակագրական ենթադրությունների էմպիրիկ մոդելի զգայունությունը»: Էկոնոմետրիկա, 55: 765-799:
25. Նասեր, Ռ, եւ Ջ Մեհճի, 2011, «Սիրիայում աշխատանքային զբաղվածության որոշիչները (2001 2010)»: Ներկայացվել է 18րդ ամենամյա տնտեսական հետազոտությունների ֆորումի (AAAS) կոնֆերանս, Աշխատանքի եւ մարդկային զարգացման թեմայով, մարտի 25-27, 2012 թ., Կահիրե, Եգիպտոս:
26. Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունը, 2009, «Զբաղվածություն» տարեգիրքը: <http://www.armstat.am/file/doc/99458063.pdf>:
27. Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, 2012, «Զբաղվածություն» տարեգիրքը: <http://www.armstat.am/file/doc/99458063.pdf>:
28. Նեֆ, Դ, Սեն Կ, եւ Վ. Քլինգ, 2012, «Հնդկաստանում գյուղական կանանց աշխատանքային զբաղվածության զարմանալի անկումը: Վերաքննում»: Գլոբալ եւ երկրագիտության հետազոտությունների (Giga) Գերմանիայի Համալսարան, աշխատանքային փաստաթղթեր, 196:
29. Նտուլի, Մ., 2007, «Հարավային Աֆրիկայում կանանց աշխատանքային զբաղվածության որոշիչները 1995–004»: Աշխատաշուկայի ուսումնասիրման ինստիտուտ (IZA), աշխատանքային թաստթուղթ No. 3119, 1-35:
30. Շուլց, Թ.Պ., 1980, «Ամուսնացած կանանց աշխատանքային առաջարկի ֆունկցիայի գնահատում»: Կանանց աշխատանքի առաջարկ, խմբ..Ջ. Սմիթ. Պրինստոն: Պրինստոնի համալսարանի հրատարակչություն, 25-89:
31. Սմիթ, Ջ., 1980, «Ակտիվների եւ աշխատանքի առաջարկ»: Կանանց աշխատանքի առաջարկ, խմբ..Ջ. Սմիթ. Պրինստոն: Պրինստոնի համալսարանի հրատարակչություն, 166-205:
32. Սուչարիտա, Ս., 2013, «Հնդկաստանում կանանց աշխատանքային զբաղվածության վրա ազդող գործոնները»: Ռումինիայի տնտեսական ամսագիր, 48:155-177:
33. Տեվենեն, Օ. 2013, «ՏՀԴԿ-ում կանանց աշխատանքային շուկայում մասնակցության որոշիչները»: Աշխատանքային փաստաթուղթ No. 145:

34. Համաշխարհային բանկ, 2013, «Տվյալներ: Աշխատանքային զբաղվածության մակարդակ, կանայք»: <http://data.worldbank.org/indicator/SL.TLF.CACT.FE.ZS>:

Հավելված 1. Անկախ փոփոխականների դիսպերսիայի ինֆլյացիայի գործոններ (VIF)

Փոփոխական	VIF
<i>respage</i>	2.130549
<i>numb_child</i>	1.204123
<i>know_eng_bgn_interm_adv</i>	1.401913
<i>know_rus_bgn_interm_adv</i>	1.307517
<i>compabl_bgn_interm_adv</i>	1.731989
<i>atleast_higheredu</i>	1.445643
<i>secondry_technicaledu</i>	1.193266
<i>married</i>	4.01662
<i>div_sep_wid</i>	4.844843
<i>monytot_250_more</i>	1.08021